



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց**

8 հոկտեմբերի 2015 թվականի N 45

**32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒ
ԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքակա-
նության հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցին՝
համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հոկտեմբերի 12
Երևան



Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգ

Ներածություն

Սույն հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) գլխավոր նպատակն է բնութագրել Հայաստանի ներդրումային միջավայրը, սահմանել ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները և նախանշել վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ պետական քաղաքականության սկզբունքները, ուղղություններն ու միջոցառումները:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, ինչն ամրագրված է վերջինիս գործունեության ծրագրում:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության խնդիրներն ու նպատակները

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՈՒՆ) խթանումը:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, որակյալ և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական

կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին: Այս նպատակների իրականացմանն է ուղղված Հայեցակարգով նախատեսված հիմնական խնդիրների լուծումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվելու է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Առաջարկվող լուծումները

Որպես խնդիրների լուծման և սահմանված նպատակներին հասնելու հիմնական գրավական՝ Կառավարությունը կարևորում է Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածում ներդրումների խրախուսումը: Հստակ գիտակցելով, որ միայն տեղական մասնավոր հատվածի ջանքերը բավարար չեն լուծելու այդ խնդիրը՝ Կառավարությունը ակտիվորեն փորձում է օտարերկրյա ներդրումներ ներգրավել՝ տնտեսական և սոցիալական ոլորտների գերակա նպատակների իրագործման համար՝ միաժամանակ ընդունելով, որ օտարերկրյա ներդրումները կարող են նպաստել տեղական տնտեսության զարգացմանը գիտելիքների և կապիտալի փոխանցման, բարձր հմտություններ պահանջող աշխատատեղերի ստեղծման, միջազգային ներդրողների դիստրիբյուտորական ցանցերի հասանելիության ապահովման միջոցով:

Ուստի համարելով ներդրումային միջավայրի բարելավումը երկրի տնտեսական առաջընթացի հիմնական գերակայություններից մեկը՝ Կառավարությունը հետևողականորեն իրականացնելու է հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորմանը՝ օտարերկրյա և տեղական ներդրումների համար լրացուցիչ խթաններ ստեղծելու միջոցով:

Այս համատեքստում խիստ կարևորվում է այն հանգամանքը, որ վերոնշյալ միջոցառումները համահունչ լինեն այլ ոլորտներում իրականացվող քաղաքականությունների

հետ, քանզի ներդրումային քաղաքականությունը խիստ զգայուն է և իր վրա կրում է մի շարք ազդեցություններ՝

Առևտրային քաղաքականություն: Առևտրի պարզեցումը, առևտրային արգելքների վերացումը, միջազգային առևտրային համաձայնագրերի կնքումը, նպատակային առևտրային քաղաքականությունների իրականացումը մեծապես կարող են նպաստել գրավիչ ներդրումային միջավայր ձևավորելուն:

Մրցակցություն: Մրցունակ միջավայր ստեղծելն ու պահպանելը, մրցակցության սկզբունքները հարգելը, անտեղի սահմանափակումներից խուսափելը պահանջում է համապատասխան օրենքի առկայություն և վերջինիս ճիշտ կիրարկում, ինչը ևս կապահովի իրականացվող ներդրումային քաղաքականության բարձր արդյունավետություն:

Հարկային քաղաքականություն: Այն երկրները, որոնք հաջողությամբ են մշակել ներդրումներին նպաստող հարկային քաղաքականություն, կարողացել են հաստատել համապատասխանություն երկրի հարկային քաղաքականության, համազգային ու տեղական զարգացման նպատակների և ներդրումների ներգրավման ռազմավարության միջև:

“Կանաչ զարգացում”: Էկոլոգիապես անվտանգ զարգացումը ինքնին խթան է հանդիսանում ներդրումների ու ինովացիաների համար, ինչն էլ իր հերթին նպաստում է կայուն աճին ու ընձեռում է նոր տնտեսական հնարավորություններ՝ աղքատության կրճատման և սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Այսպիսով ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ կտարվի նպատակաուղղված և հետևողական աշխատանք՝ ներդրումների իրականացմանը նպաստող գործուն, արդյունավետ և թափանցիկ համակարգի ապահովման, ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, ներդրումային գործունեությանն առնչվող միջազգային լավագույն չափանիշների և փորձի կիրառման ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 1. Ներդրումային քաղաքականության սկզբունքները

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերահաստատում է ներդրումների նկատմամբ «բաց դռների» քաղաքականություն իրականացնելու իր մոտեցումը՝ հնարավորինս ազատականեցնելով ՕՈՒՆ մուտքի, գործունեության և ելքի հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի ներդրումային օրենսդրությամբ («Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենք և դրա հետ կապված ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 15-ի նիստի N 46 արձանագրային որոշում, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթները) օտարերկրյա ներդրողների նկատմամբ ամրագրված են ազգային և առավել բարենպաստության ռեժիմները, ինչպես նաև օտարերկրյա ներդրումներին վերաբերող առանցքային իրավունքներն ու արտոնությունները:
3. Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի ներդրումային դաշտի գրավչությունը և խրախուսել ներդրումները՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության սկզբունքները հետևյալն են.
 - 1) Թափանցիկություն: Հայաստանում ներդրումներին առնչվող օրենսդրական ակտերը և ներդրումային քաղաքականությանը վերաբերող դրույթներ պարունակող փաստաթղթերը մշակման փուլից սկսած թափանցիկ և մատչելի ձևով հասանելի կլինեն հանրությանը: Իրավական ակտերի և քաղաքականության մշակման գործընթացում կներառվի մասնավոր հատվածը:
 - 2) Առավել բարենպաստության ռեժիմ: Որևէ երկիր ներկայացնող ներդրողների կողմից ներդրումների իրականացման և ընդլայնման նկատմամբ ցուցաբերել նույն վերաբերմունքը, ինչ համանման իրավիճակում կցուցաբերվեր այլ երկրներ ներկայացնող ներդրողների պարագայում:
 - 3) Ազգային ռեժիմ: Բացի ազգային օրենսդրությամբ սահմանված բացառությունների՝ ներդրումների գործարկման, ընդլայնման, իրականացման և պաշտպանության հարցում օտարերկրյա ներդրողների նկատմամբ կիրառել ոչ պակաս նպաստավոր

վերաբերմունք, քան նույնանման իրավիճակներում գտնվող տեղացի ներդրողների հանդեպ:

- 4) Ներդրումային արտոնություններ: Սահմանող արտոնությունների համակարգը համահունչ կլինի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին՝ ապահովելով թափանցիկություն, արդյունավետ կառավարում և կանոնավոր մոնիթորինգ:
- 5) Գործունեությանը ներկայացվող պահանջներ: Չեն սահմանվի այնպիսի պահանջներ, որոնք խոչընդոտում կամ սահմանափակում են առևտրի և ներդրումների ընդլայնումը:
- 6) Օտարում և փոխհատուցում: Ներդրումները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օտարվի, ազգայնացվի կամ օտարմանն ու ազգայնացմանը հավասարազոր հետևանքներ ունեցող այլ գործողությունների չեն ենթարկվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է հանրային նպատակներով: Օտարումը կիրականացվի Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով, ոչ խտրական հիմքերի վրա:
- 7) Ռեպատրիացիա և փոխարկելիություն: Ապահովել օտարերկրյա ներդրումների հետ կապված միջոցների՝ շահույթների, դիվիդենդների, ռոյալթիների, վարկային վճարումների ու մարումների ազատ և անհապաղ փոխանցումը՝ ազատ փոխարկելի արտարժույթով:
- 8) Վեճերի լուծում: Պետության և ներդրողի կամ երկու մասնավոր ներդրողների միջև օտարերկրյա ներդրումների կապակցությամբ ծագող վեճերը լուծել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ միջազգային պարտավորություններից բխող կամ երկու կողմերի համար ընդունելի այլ արբիտրաժային ընթացակարգերի միջոցով:
- 9) Անձնակազմի մուտքը և կեցությունը: Համապատասխան օրենքների և կանոնակարգերի շրջանակներում թույլատրել օտարերկրյա տեխնիկական և ղեկավար անձնակազմի ժամանակավոր մուտքն ու կեցությունը՝ օտարերկրյա ներդրումների հետ կապված աշխատանքներում ներգրավելու նպատակով:
- 10) Կրկնակի հարկման բացառում: Օտարերկրյա ներդրումների մասով կբացառվի կրկնակի հարկումը:

ԳԼՈՒԽ 2. Ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությունները

4. Հայաստանը իրականացնելու է համապարփակ բարեփոխումներ՝ երկրում օտարերկրյա ներդրումները և տեղական մասնավոր հատվածի համար դրանից բխող օգուտները խթանելու նպատակով: Այդպիսով հաշվի կառնվեն ազգային տնտեսական և սոցիալական զարգացման նպատակները, ինչպես նաև կվերացվեն ներդրումների հետ կապված հիմնական խոչընդոտները:
5. Ներդրումային քաղաքականության բարեփոխումներն ուղղված կլինեն հետևյալին.
 - 1) Կատարելագործել ներդրումային քաղաքականության բոլոր կարևոր տարրերը՝ ներդրումային տեսլականը/ռազմավարությունը, միջոցառումները/ գործողությունները և համագործակցելով այլ մարմինների հետ՝ ապահովել դրանց պատշաճ իրականացումը:
 - 2) Ապահովել առավելագույն արդյունավետություն ներդրումների կենսացիկլի տարբեր փուլերում հնարավոր խոչընդոտները մեղմելու միջոցով՝ սկսած ներդրումների ներգրավումից և պաշտպանությունից մինչև տեղական տնտեսության հետ կապեր հաստատելը:
 - 3) Համապատասխան միջավայր ստեղծել արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար, ինչն իր բնույթով արտահանման ուղղվածություն ունի և, համարվելով ներդրումների ամենադյուրաշարժ տեսակը, պահանջում է արտահանման-ներմուծման արդյունավետ գործառնություններ, ինչպես նաև ներդրողների պաշտպանության ստանդարտների հաստատում:
6. Բարեփոխումների միջոցով կվերացվեն օտարերկրյա ներդրումների ներգրավման ու պահպանման հիմնական արգելքները, որոնք ի հայտ են բերվել կառավարության և Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից՝ ներդրողների պատկերացումների մասին համատեղ իրականացված հետազոտության և մասնավոր հատվածի հետ հարցազրույցների միջոցով: Դրանց թվին են դասվում.

- 1) Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ համապարփակ ներդրումային ռազմավարության բացակայությունը, որը թույլ կտար ի հայտ բերել ազգային համեմատական առավելությունները, պարզել ներդրումների առաջնահերթ ոլորտները և առավելագույնի հասցնել ինչպես ներդրումային քաղաքականության, այնպես էլ ՕՈՒՆ լայն շրջանակներում ներգրավված տարբեր դերակատարների միջև փոխգործակցությունը:
- 2) «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի մասով, որում արտացոլված չեն միջազգային տնտեսության նոր իրողությունները, մասնավորապես՝ կապված ներդրողների պաշտպանության երաշխիքների հետ.
- 3) Տնտեսական գործունեությանն առնչվող օրենսդրության թափանցիկության անբավարարությունը և համապատասխան իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները, ինչպես նաև դրանց ոչ պատշաճ կիրարկումը պետական տարբեր գերատեսչությունների կողմից:
- 4) Ներդրումային միջավայրի հետ կապված այլ արգելքներ, որոնք խոչընդոտում են ներդրողների մոտ վստահության ձևավորմանը, մասնավորապես՝ անհարկի և ծախսատար ստուգումներ, պայմանագրերի կատարման տևական գործընթացներ և այլն:
- 5) Վերոնշյալ բարեփոխումների մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև ճանաչված մի շարք միջազգային հաշվետվություններում տեղ գտած եզրահանգումները:

Գլուխ 3. Բարեփոխումների գործողությունների ծրագիրը

7. Ներդրումային քաղաքականությանը խոչընդոտող՝ վերը հիշատակված ընդհանուր ոլորտներին անդրադառնալու համար ՀՀ կառավարությունը կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում կիրականացնի սույն գործողությունների ծրագիրը՝ ներդրումների վերաբերյալ իր երկարաժամկետ տեսլականն իրականություն դարձնելու ուղղությամբ:

8. Բարեփոխումների ուղղությունները որոշվել են ներդրողների և ՀՀ կառավարության միջև կանոնավոր խորհրդակցությունների արդյունքում: Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխման երկրորդ ծրագրի ընթացքում հանդես է եկել որպես միջնորդ: Ի սկզբանե գործողությունների այս ծրագիրը նպատակ է հետապնդում ամրապնդել օտարերկրյա ներդրումների ներգրավմանն ուղղված Հայաստանի Հանրապետության քաղաքականության հիմքերը: Այդուհանդերձ, քանի որ երկրները մրցակցում են ներդրումների համար, նրանք պետք է շարունակաբար արդիականացնեն իրենց քաղաքականության շրջանակները: Ստորև նկարագրված բարեփոխումները ոչ թե գործունեության ավարտն են, այլ նախանշում են կառավարության ջանքերը՝ ուղղված համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններին արագ արձագանքելուն և միջազգային մրցունակությունը բարձրացնելուն:

3.1. **Ներդրումային օրենսդրության կատարելագործում**

9. Կայուն, պարզ և թափանցիկ իրավական դաշտը արագ զարգացող ներդրումային միջավայրի կարևոր նախապայման է հանդիսանում: Իրավական դաշտի կայունության ապահովման համար անհրաժեշտ է հստակեցնել օրենքների բովանդակությունը, բարձրացնել օրենքների մշակման և ընդունման գործընթացների թափանցիկության և կանխատեսելիության մակարդակը:
10. Այդ առումով կարևորվում է Հայաստանի Հանրապետության ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության զարգացման ներկա փուլում չափազանց կարևոր է օրենսդրորեն ամրագրել հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ թե՛ օտարերկրյա և թե՛ տեղական ներդրողների համար:
11. Ներդրումային ոլորտին առնչվող օրենքներում առկա բացերը նվազագույնի հասցնելու և միջազգային լավագույն փորձին մոտեցնելու նպատակով պետք է իրականացվեն մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

3.1.1. *Վերանայել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը*

12. 1994 թվականից ի վեր գործարար և ներդրումային միջավայրը զգալիորեն ընդլայնվել է և կրել բովանդակային փոփոխություններ, մինչդեռ վերոնշյալ օրենքը ընդունման պահից փոփոխությունների չի ենթարկվել: Թեև գործող օրենքը վկայում է օտարերկրյա ներդրումների և ներդրողների հանդեպ կառավարության «բաց դռների» քաղաքականության վարման մասին, այնուամենայնիվ, որոշակի ոլորտներում առավելապես ներդրողների պաշտպանության հետ կապված հարցերում բարելավման լուրջ կարիք ունի: Ուստի անհրաժեշտություն է առաջանում վերոնշյալ օրենքում՝

- 1) Ներառել արդարացի և հավասար վերաբերմունքի ստանդարտներ,
- 2) Ուժեղացնել օտարումից պաշտպանությանն առնչվող դրույթները,
- 3) Ուժեղացնել արտարժույթի փոխարկելիությանն ու փոխանցումներին առնչվող դրույթները,
- 4) Հստակեցնել վեճերի լուծման վերաբերյալ դրույթները՝ ներդրող-պետություն վեճերի պարագայում միջազգային արբիտրաժ դիմելու հստակ և միանշանակ իրավունք տրամադրելու միջոցով:
- 5) Հստակեցնել սահմանափակումների բացակայությանն առնչվող դրույթները՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով «բացասական ցանկի» սկզբունքը՝ սահմանափակումները միանգամայն հստակ նշելու համար:

3.1.2. Վերանայել «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող այլ իրավական ակտերը

13. Հայաստանում ազատ տնտեսական գոտիների ստեղծման հիմնական նպատակը օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման և դրա արդյունքում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտահանման ծավալների աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանն ու կայուն տնտեսական զարգացմանը նպաստելն է: Ազատ տնտեսական գոտիների գործունեությունն ապահովելու համար ստեղծվել է համապատասխան իրավական դաշտ: Այսպես, ոլորտի հիմնական կարգավորող փաստաթուղթ է հանդիսանում 2011 թվականի մայիսի 25-ին ընդունված «Ազատ

տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսված են մի շարք հարկային և մաքսային արտոնություններ: Այնուամենայնիվ, ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցելուց հետո լրացուցիչ անհրաժեշտություն առաջացավ վերանայելու գործող օրենսդրությունը՝ այն համապատասխանեցնելով ԵԱՏՄ օրենսդրությանը:

3.1.3 Պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացում

14. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացումը՝ դիտարկելով այն որպես իր գործունեության կարևոր ուղղություններից մեկը, որը հնարավորություն կտա բարձրացնել հանրային ծառայությունների որակը, զարգացնել ենթակառուցվածքը և նպաստել ազգային և տեղական կարևորագույն ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Այսօր Հայաստանում կան նման համագործակցության մի շարք հաջողված օրինակներ:
15. ՀՀ կառավարությունը դեռևս 2009 թվականի հունվարի 29-ին ընդունել է «Պետություն-մասնավոր հատված համագործակցության հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 4 արձանագրային որոշումը, իսկ 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշմամբ հաստատել է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման և հաստատման կարգը, որում սակայն առկա են մի շարք բացեր:
16. Ուստի անհրաժեշտ է ամրապնդել առկա նվաճումները և, հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, շարունակել աշխատանքները այդ ուղղությամբ՝ շեշտադրելով պետություն-մասնավոր հատված գործընկերությունը կարգավորող օրենսդրության կատարելագործումը:

3.2. ՕՈՒՆ ներգրավման ռազմավարության մշակում

17. Հայաստանում ներկայումս բացակայում են ՕՈՒՆ-ների ֆորմալ ռազմավարություն ու ոլորտային մակարդակում մրցունակության համակարգային ուսումնասիրություններ:
18. Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը կմշակի և կներդնի ՕՈՒՆ-ների առավել համակարգային և վերջնական արդյունքին միտված ռազմավարություն, որը կիրականացվի երկու փուլով՝

3.2.1 ՕՈւՆ ներգրավման և խրախուսման ռազմավարության մշակում.

19. Այս նպատակով կմշակվի և կհաստատվի ռազմավարական փաստաթուղթ, որը՝

- 1) Կձևակերպի ՕՈւՆ նշանակությունը և դրանց կարևորությունը գլխավոր քաղաքականության նպատակների իրագործման հարցում.
- 2) Կսահմանի ՕՈւՆ ներգրավման, երկիր մուտք գործելու, պահպանելու և խթանելու, ոլորտում ներգրավված հիմնական պետական մարմինների դերերն ու պարտականությունները.
- 3) Կներկայացնի ՕՈւՆ ներգրավման գերակա թիրախ-ոլորտները.
- 4) Կսահմանի ՕՈւՆ ներգրավման թիրախները և ակնկալվող օգուտները (ներդրումները՝ գումարային արտահայտությամբ, ստեղծված աշխատատեղերը, ներգրավված տեխնոլոգիաները և այլն).
- 5) Կներդնի իրականացման տարեկան ծրագրի մշակման մեխանիզմ՝ կատարողականի հիմնական ցուցանիշներով և թիրախներով.
- 6) Կներդնի մոնիթորինգի ու գնահատման համակարգ և ներդրողների հետ աշխատանքի համակարգ (investor tracking system): Սա հնարավորություն կընձեռի կառավարությանը հսկել օտարերկրյա ներդրումների ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը և չափել ներդրումների ներգրավման ուղղությամբ կառավարության կատարած ծախսերի արդյունավետությունը:

3.2.2 ՕՈւՆ ռազմավարության վերաբերյալ տարեկան պլանի մշակում

20. Այս առնչությամբ կմշակվի և կհաստատվի ՕՈւՆ ռազմավարության վերաբերյալ տարեկան իրականացման պլանը, որը՝

- 1) կթիրախավորի առանձին, մասնավորապես արդյունավետության բարձրացմանն ուղղված ոլորտները.
- 2) Հիմնված կլինի ներդրումների համար ընտրված ոլորտներում համեմատական գնահատականի (բենչմարքինգի) վրա.
- 3) Կհզորացնի ոլորտային թիմերը, այդ թվում՝ մասնավոր հատվածում փորձառություն ունեցող նոր անձնակազմ ներգրավելու կարողությունը:

3.3. Ներդրումների խրախուսում

21. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարում է ներդրումների խրախուսման հետևողական քաղաքականություն և ներդրումների նկատմամբ կիրառում է «ներդրողների կարիքների վրա հիմնված» մոտեցում:
22. Հայաստանում ներդրումների խրախուսումը կիրականացվի հիմնականում հետևյալ ուղղություններով.
- 1) ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում,
 - 2) ՓՄՁ ներդրումների խրախուսում,
 - 3) վերազգային կորպորացիաներից ներդրումների խրախուսում,
 - 4) ազատ տնտեսական գոտիների կայացում,
 - 5) էներգախնայող և բարձր տեխնոլոգիական ներդրումների խրախուսում,
 - 6) տարածքային համաչափ զարգացմանը նպաստող ծրագրերի խրախուսում:
23. Ներդրումների խրախուսման վերոնշյալ ուղղությունների կյանքի կոչման նպատակով պետք է իրականացվեն հետևյալ միջոցառումները՝
- 1) Ընկերությունների համար արտահանման ֆինանսավորման մատչելիության գործիքակազմի (արտահանման ապահովագրում) զարգացում:
 - 2) Ազատ տնտեսական գոտիների ստեղծում և դրանցում նոր շահագործողների ներգրավում:
 - 3) Արտոնությունների փաթեթի մշակում ներդրումային ծրագրերի համար՝ հաշվի առնելով
 - ա. ստեղծվելիք աշխատատեղերի քանակը,
 - բ. արտասահմանում մեծ ցանցի առկայությունը կամ արտասահմանյան որևէ ցանցի համար մատակարար հանդիսանալը,
 - գ. խնդրահարույց բիզնեսի վերականգնմանն ու զարգացմանն ուղղվածությունը,
 - դ. տարածքային առանձնահատկությունները (միջին աշխատավարձը, գործազրկության մակարդակը, մայրաքաղաքից հեռավորությունը, տարածքի ներուժը):

- 4) Վենչուրային ֆինանսավորման ինստիտուտի զարգացում:
- 5) Ներդրումների համար գրավիչ պետական անշարժ գույքի քարտեզագրման իրականացում:
- 6) Հանրապետության տարածքում ներդրումային ծրագրերի հավաքագրման, միասնական ձևաչափի բերման և հրապարակման աշխատանքների իրականացում, ներդրումային ծրագրերի միասնական բազայի ստեղծում:

3.3.1. Ներդրումների պրոակտիվ խթանումն ապահովելու նպատակով գործառույթների զարգացում

24. Կառավարությունը քայլեր կձեռնարկի ներդրումների խթանման հատուկ գործառույթներ մշակելու ուղղությամբ, ինչպիսիք են՝
- 1) Մարքեթինգը և իրազեկումը,
 - 2) Հետազոտությունները,
 - 3) Ներդրողների հետ աշխատանքի համակարգ (investor tracking system),
 - 4) Հետներդրումային սպասարկման մեխանիզմի մշակում,
 - 5) ՕՈՒՆ-ից ծագող հարաբերությունների ուժեղացման ծրագրերը,
 - 6) Արտոնությունների կառավարումը,
 - 7) Ներդրումների խթանման հետ կապված այլ գործառույթները:

3.3.2. Ներդրումները խթանող արտոնությունների փաթեթի մշակում, այդ թվում՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մեխանիզմները

25. Այդ նպատակով անհրաժեշտ է.
- 1) մշակել և հրապարակել ներդրողներին ներկայումս առաջարկվող արտոնությունների ցանկ.
 - 2) գնահատել նախանշված նպատակներին հասնելու գործում առկա արտոնությունների արդյունավետությունը (ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, ներդրումների ներհոսքը, արտահանումները և այլն).

- 3) անհրաժեշտության դեպքում մշակել արտոնությունների նոր սխեմաներ՝ գլխավորապես արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ իրականացնողների համար.
- 4) Հայաստանում գլխամաս հիմնադրած հանրաճանաչ կազմակերպությունների համար արտոնությունների փաթեթի մշակում կախված գործունեության ծավալներից.
- 5) Խոշոր (10 մլն. ԱՄՆ դոլար և/կամ առնվազն 300 աշխատատեղ ստեղծող) և ռազմավարական ներդրումային ծրագրերի համար արտոնությունների մշակում:

3.3.3 Սփյուռքի ներդրումային ներուժի օգտագործում

26. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է սփյուռքահայ ներդրողների հետ համագործակցության խորացումը: Այդ նպատակով ստեղծվելու է Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի առավելագույնս ներգրավման և ներդրումների խրախուսման նպաստավոր միջավայր, որտեղ օժանդակություն կցուցաբերվի մրցունակ և զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի ավելացմանը:
27. Վերոնշյալի կապակցությամբ հիմնական ջանքերը ուղղվելու են սփյուռքի ներդրումային ներուժի վերլուծությանն ու համագործակցության մեխանիզմի մշակմանը:

3.3.4 Ներդրումների ներգրավում գիտելիքահեն և նորարարական տնտեսության զարգացման համար

28. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կխրախուսի գիտելիքահեն և նորարարական տնտեսության կայացմանն ուղղված յուրաքանչյուր նախաձեռնություն և դրան ուղղված ներդրումները:
29. Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են «գիտություն-արտադրություն» շղթայի ապահովմանը նպաստող ներդրումները, գիտահետազոտական ոլորտում օտարերկրյա ներդրումները, ներդրումները մարդկային կապիտալում և հանրային ենթակառուցվածքներում, հատկապես՝ մշակող արդյունաբերության ճյուղերում, տեղեկատվական տեխնոլոգիաների, էներգետիկայի և տուրիզմի ոլորտներում:
30. Այս նպատակով նախատեսվում է «գիտություն-արտադրություն» կապը ապահովող ինստիտուցիոնալ կառույցների ստեղծում:

3.4. Ներդրողների մտահոգություններին ու բողոքներին արձագանքելու մեխանիզմների հիմնում

31. Ներդրողները Հայաստանում բախվում են ներդրողների պաշտպանության հետ կապված տարաբնույթ խնդիրների: Մտահոգությունների մեծ մասի առաջացման պատճառն ավելի շուտ օրենքների ու կանոնակարգերի թերի իրականացումն է, քան թե դրանց անկատարությունը:
32. Այս խնդիրները բացասական հետևանքներ են ունենում Հայաստանում ներդրումների ներգրավման և խթանման առումով: Բացի այդ, դրանց հետևանքով կարող են խախտվել միջազգային ներդրումային համաձայնագրերով Հայաստանի ստանձնած միջազգային ներդրումային պարտավորությունները:
33. Ներդրող-Պետություն հնարավոր վեճերից խուսափելու համար կառավարությունը կգնահատի ներդրողների հետ աշխատանքի համակարգի (investor tracking) և դիտանցման մեխանիզմների գործունեությունը բողոքների պարագայում՝ ներդրումների վրա այդ բողոքների ազդեցությունը գնահատելու և վեճի ծագումն ու պատճառը պարզելու նպատակով:
34. Վերոնշյալն ապահովելու համար անհրաժեշտ է հավաքագրել և վերլուծել հետևյալ տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր բողոքի/խնդրի վերաբերյալ.
- 1) Ռիսկի ենթարկվող ներդրումների արժեք.
 - 2) Ներդրումների հետ կապված բողոքի այլ ազդեցությունները (ինչպիսիք են՝ բողոքին ընթացք տալու հետ կապված ծախսերը, աշխատատեղերը, որոնց վրա այն անդրադարձել է և այլն).
 - 3) Ներդրողի նկարագրությունը.
 - 4) Խնդրի բնագավառը.
 - 5) Առնչվող պետական գերատեսչությունները.
 - 6) Բողոքի առնչությամբ ներպետական/միջազգային դատական գործի առկայությունը, այդ գործի ընթացիկ կարգավիճակը:

35. Կառավարությունը կարող է նաև ներդնել ներդրողի հետ աշխատանքի մեխանիզմի առավել կատարելագործված տարբերակ՝ Ներդրողի ներգրավման և վստահության մեխանիզմը:

36. Ներդրողների ներգրավման և վստահության մեխանիզմի գործարկումը կպահանջի անկախ գործակալության առկայություն, ինչպիսին է, օրինակ Օմբուդսմենի գրասենյակը՝ բողոքներին առնչվող հետևյալ գործառույթներն իրականացնելու նպատակով.

- 1) Տեղեկատվության փոխանակում.
- 2) Վաղ նախազգուշացում.
- 3) Խնդիրների լուծման մեթոդների լավագույն փորձ.
- 4) Խնդրի կարգավորման լուծումների ներկայացում:

Ժամանակացույց
Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգից բխող միջոցառումների

No:	Միջոցառում	Պատասխանատու պետական մարմին	Վերջնաժամկետ	Ֆինանսավորման աղբյուր	Միջոցառման արդյունքը
1.	<p style="text-align: center;">Ներդրումային օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝</p> <p>1) «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի դիտանցում</p> <p>2) «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի բարեփոխման ճանապարհային քարտեզի մշակում</p> <p>3) Քաղաքականություն և նոր «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, անհրաժեշտության դեպքում նաև դրանից բխող իրավական ակտերի նախագծերի մշակում</p> <p>4) «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի և անհրաժեշտության դեպքում դրանից բխող իրավական ակտերի փոփոխությունների նախագծերի մշակում</p> <p>5) «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենք և անհրաժեշտության դեպքում դրանից բխող իրավական ակտերի մշակում</p>	<p style="text-align: center;">ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Հայաստանի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	2016թ. սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջում	Համապատասխան օրենքների և դրանցից բխող իրավական ակտերի փոփոխությունների նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն

2.	<p>ՕՈՒՆ ներգրավման ռազմավարության մշակում, այդ թվում՝</p> <p>1) ՕՈՒՆ ներգրավման և խթանման ռազմավարության մշակում 2) ՕՈՒՆ ռազմավարության հստակ տարեկան պլանի մշակում 3) Ոլորտային ուղղվածության արտոնությունների մշակում՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ներ ներգրավելու նպատակով</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Հայաստանի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն</p>	2017թ. նոյեմբեր	Ֆինանսավորում չի պահանջում	ՕՈՒՆ ներգրավման ռազմավարական ծրագրի ներկայացում ՀՀ կառավարություն
3.	<p>Ներդրումների խրախուսում, այդ թվում՝</p> <p>1) Ներդրումների խթանման միջոցառումների իրականացում 2) Ներդրումների խթանման հատուկ գործառույթների մշակում 3) Ներկայումս առկա արտոնությունների վերանայում և գնահատում</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Հայաստանի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	2017թ. դեկտեմբեր	Դոնոր կազմակերպություններ	Ներդրումային արտոնությունների փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն

4.	<p>Ներդրողների մտահոգություններին ու բողոքներին արձագանքելու մեխանիզմների հիմնում, այդ թվում՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Ներդրողների բողոքների լուծման մեխանիզմի գործունեության գնահատում 2) Ներդրողների բողոքների քննության (հսկողության և դիտանցման կամ ներդրողի ներգրավման և վստահության) մեխանիզմի գործարկում 3) ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ ներդրողների, այդ թվում պոտենցիալ ներդրողների իրազեկվածության բարձրացման մեխանիզմի ներդնում 	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Հայաստանի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	<p>2017թ. հոկտեմբեր</p>	<p>Դոնոր կազմակերպություններ</p>	<p>Համապատասխան մեխանիզմի ներդնում և գործարկում</p>
----	---	---	-------------------------	----------------------------------	---

